



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28501
Փետրուար 27, 1984

Արժանաշնորհ
Տ. Բարի Բնյ. Մէթճեան
Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ ծխական խորհուրդի
Փէրլոն.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք Ձեր 13, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ փետրուար 5ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ռօլըն Հափսըն
Արթօ Վարդուկեան
Վահրամ Վարժապետեան
Վազգէն Օհանեան
Սթիվըն Խաչիկեան